ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ Չարենցավան համայնքի <<Մաքուր Չարենցավան>> ՀՈԱԿ-ը, որը գտնվում է ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ 1 հասցեում, ստորև ներկայացնում է <<ՉՔ-ՄՉՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-17/1>> ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի արդյունքում 2016 թվականի դեկտեմբերի 26-ին կնքված պայմանագրում 2017 թվականի հունվարի 26-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Պայմանագրով սահմանվել է, որ ապրանքների մատակարարումն իրականացվելու է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու և կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքվելու դեպքում:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման նպատակով 26.01.2017թ. կնքվել է համաձայնագիր: Միաժամանակ ապրանքների մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել մինչև 30.12.2017թ.:

Փոփոխության հիմնավորում: Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման համար նախատեսվել են համապատասխան ֆինանսական միջոցներ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող **Շ. Հարությունյանին:**

Հեռախոս՝ **(093) 74-48-26:**

Էլ. փոստ՝ **gnumnerlusavan@mail.ru**:

Պատվիրատու՝ <<Մաքուր Չարենցավան>> ՀՈԱԿ